

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՁԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝
 ՆՎԻՐՎԱԾ ՉԱՐԵՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ
 100-ԱՄՅԱԿԻՆ

«Գիրն սպանանէ, այլ Հոգին կեցուցանէ» (A Կորնթ. Գ 6):

Գիրը ինքնին իբրև գիր սպանում է, սակայն Հոգին, գրի միջից արտաՀայտված, կյանք է տալիս: Այս բառերը գրվեցին քրիստոնեության տարածման ամենամեծ առաքյալի՝ Պողոս առաքյալի կողմից Կորնթացիներին ուղղված իր երկրորդ թղթում: Երբ առաքյալը նկատում էր, որ մարդիկ գրին էին կառչում և գրի միջից արտացոլող, ճառագայթող Հոգու Հետ չէին Հաղորդվում, այն ժամանակ նա ասաց, որ գիրը կսպանի, եթե գիր մնա, այլ Հոգին կյանք կտա: Այս խորունկ բառերը ո՛չ ժամանակ և ո՛չ էլ տարածություն են ճանաչում, որի համար էլ Պողոս առաքյալը գրեց. «Թուղթք մեր դուք էք՝ գրեալ ի սիրտս մեր»: Մեր թուղթը դուք եք ձեր կյանքով, որ երբ մարդիկ ճանաչեն և ընթերցեն՝ կյանք կստանան: Նաև ավելացրեց. «Դուք էք թուղթք Քրիստոսի, գրեալ ոչ մրով, այլ Հոգով Աստուծոյ կենդանւոյ, ոչ ի տախտակս քարեղենս, այլ տախտակս սրտի մարմնեղէնս» (A Կորնթ. Գ 3): Քրիստոսի Հետևորդներին իր խոսքն ուղղելով, ասաց, որ մեր թուղթը, Քրիստոսի թուղթը դուք եք, իբրև ապրող անձինք: Դուք գրված եք ոչ թե գիր քարի, կամ մագաղաթի և կամ թղթի վրա, այլ ձեր սրտերում է գրված, ձեր սրտերի արտաՀայտությունը եղող կյանքն է Քրիստոսի կյանքը ձեր միջից արտաՀայտված:

Հավատացյալներ, այս առավոտ այս բառերը ես մեջ բերեցի Աստվածաշունչ Մատյանից, որովհետև մենք այսօր ոգեկոչում ենք, աղոթք ենք անում մի անձի համար, որ 100 տարիներ առաջ ծնվեց մեր Հողում և իր կյանքի 40-րդ տարում թողեց այս տեսանելի, երկրավոր, Հոգեղեն, անցավոր աշխարհը և ոչ ոք գտնվեց, որ նրա համար աղոթք անի, «և ոչ փող զարկին», երբ ինքը իր ամբողջ կյանքում փող ուներ և փող եղած էր Հայ ժողովրդի Հոգեկան բարձրագույն ապրումների: Բանաստեղծները, մտավորականները, արվեստագետները, Հոգևորականները ինձ համար նվագողներն են Հոգու նվագարանի ժողովուրդների կյանքում:

Նրա Չարենց եղավ այն յուրահատուկ, եզակի, անկրկնելի իր տեսակի մեջ գրողներից մեկը, որ Հայ ժողովրդի մշակույթի մեջ մի այնպիսի նվագ երգեց, որ մինչև օրս և գալիք տարիներին Հնչելու է Հայ ժողովրդի ականջներին: Նաև եղավ երգիչը Հայ ժողովրդի ամենեն Հարագատ ապրումների, և այսօր ես Հավատում եմ Հոգուս մեջ և Հոգևոր աչքով տեսնում, որ նա երկնքից, իր երկնային կայքերից Հրճվում է, երբ տեսնում է, որ այն խորանը, որտեղ Կոմիտասը պատարագեց և ինքը, երբ գրեց Կոմիտասին ձոնված իր ռեզվիեմը, ինքը ռեզվիեմ չունեցավ, սակայն այսօր, Հարյուր տարի իր ծնունդից և 60 տարիներ իր մահվանից Հետո եկել ենք մենք և ռեզվիեմ ենք մատուցում, աղոթք ենք անում իր Հոգու Հավերժության համար: Առաջին հերթին ես, որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց, պարտք եմ զգում իմ խոր գնահատանքը Հայտնել մեր Հայրենի ազատ

և անկախ Հայրենիքին, պետությունը, որ այս տարին՝ 1997-ը, Հոչակեց Չարենցի տոնակատարությունը տարի: Հետևեցի և Հրեմիայի Հաստատեցի, որ ոչ միայն Երևան քաղաքում, այլև Համակ Հայաստանում բազմաթիվ միջոցառումներ տեղի ունեցան, որոնց միջից մեր ժողովուրդը ևս մեկ անգամ Հաղորդվեց Չարենցի Հոգու խոսքի Հետ, և Եղիշե Չարենցը մեկ անգամ ևս գրվեց մեր սրտերի տախտակներին և ոչ թե թղթի էջերում: Ես գնահատում եմ մեր մշակույթի նախարարությունը, որ այդ բոլոր միջոցառումների ընդհանրական եզրափակումը կատարեց Երևանի օպերայի շենքում, և ես էլ պարտք զգացի, որպես Հոգևոր առաջնորդը մեր ժողովուրդի, մեր Եկեղեցու ներկայությունը բերել այդ Հանդիսությունը և այսօր եզրափակումն է կատարվում Մայր Տաճարում, գազաթնացումը, Հոգեղեն վերացումը, երկնքի և երկրի միջև այն կապն է ստեղծվում Հոգեհանգստյան այս արարողության միջից: Եկեղեցին Հայոց ոչ թե նեղ իմաստով, մասնակի իմաստով կրոնական Հոգևոր Հաստատությունն է, այլ ամբողջական և ընտրելագույն իմաստով Համապատասխանում է Հայ Հոգու ճառագայթումին: Հենց ինքը՝ Չարենցը, ճանաչում էր, իր բոլոր քննադատություններովը Հանդերձ մեր անցյալի սայթաքումներին, որ մեր մշակույթի ամենից եռուն և ամենից ճառագայթուն և դարերի վրա իր Հետքը տարածուն դարը եղավ այն դարը, երբ գիրը Հայոց ծնվեց Հայ Եկեղեցում: Առաջին գիրքը եղավ Աստվածաշունչ Մատյանը և ամբողջ քրիստոնեական գրականությունը լցվեց, նորոգեց մեր աշխարհը և նոր ինքնատիպ, ինքնահայացք գրականության ընթացք տվեց: Երբ Եկեղեցին, մեր մշակույթի օջախը եղավ իր ծննդավայրը և նաև եղավ այդ օջախին կենդանի պահպանությունը դարերի ընթացքում մեր զենքերով, մեր վանականներով, մեր բոլոր այն նվիրյալ Հոգևորականների աշխատանքներով, որոնցով մեր մշակույթը այսօր էլ լինի այն, ինչ որ է, և ինչով դուք Հպարտանում եք, տալով անունները այն մեծ փարոսների, որոնք ճառագայթում են իրենց մահվանից այս կողմ և ճառագայթելու են Հավիտյան: Իմ խոսքն այսօր Եղիշե Չարենցի գրական վաստակի մասին չի կարող լինել: Ոչ իմ Հմտությունը, ոչ իմ կարողությունը և ոչ էլ այսօրվան այս Հոգեհանգստյան արարողությունը՝ այս միջավայրը թույլ կտան ինձ, որ ես կարողանամ նման գրական վերլուծում անել, դա մեր գրագետները, մեր գրականագետները լավագույնս արեցին, տակավին էլ անելու են գալիք տարիներին: Ես այսօր, այս բեմից սրբություն սրբոց ճանաչված Հայ ժողովուրդի այս սրբազնագույն ուխտավայրից կոչ եմ անում իր գրչակից, Հետագայում ապրած և այժմ Հանգուցյալ Պարույր Սևակի բառերով «կոչեմ ապրողաց», դ՛ու՛ք՝ նոր սերնդի գրողներ, Եղիշե Չարենցով միայն մի Հպարտացեք: Նա ապրեցրեց մեր նոր կյանքը նոր ապրումներով, ոչ թե կրկնելով անցյալը, այլ ստեղծելով այն, ինչ որ իր ժամանակներին ստեղծեց, իր պայմանների տակ ստեղծեց: Նա «Մահվան տեսիլք» գրեց, երիտասարդ եղբայրներս և քույրերս, դուք գրեցեք Հարություն տեսիլքը: Նա ցմրուր ըմպեց բանտերում, և ոչ ոք տեսավ տառապանքը նրա Հոգու: Բանտը բանտի մեջ, ինքը իր անձի մենակության մեջ բանտված: Նա, որ ճառագայթում էր, որ մեծ գաղափարների շեփորահարն էր, ինքն իր մեջ ամփոփվեց, բանտվեց բանտի մեջ և մահվան տեսիլներ գրեց: Տառապանքի օրեր ապրեց: Այսօր մեր նոր

Հայրենիքում, նոր ստեղծված կյանքի պայմաններում ես ցանկանում եմ և աղոթում Աստծուն, որ նոր Եղիշե Չարենցներ դուրս գան, ոգու մարդիկ, որ կարող են իրենց գաղափարը չծախել, ինչպես Չարենցը չծախեց: Մենք այսօր պետքն ունենք մի այնպիսի նոր գրականության, որ այս նոր պայմաններին մի նոր թռիչք տա մեր ժողովրդին: Տազնապ է ապրում մեր Հայրենիքը նույնիսկ այս օրերին: Բոլորդ էլ իմ չափ ծանոթ եք, սակայն տազնապ չի նշանակում հուսահատություն: Տազնապը ինձ համար նշանակում է խթան, մղիչ ուժ, գրգիռ կյանքի մեջ Հաղթելու կամքի և դրա շեփորահարները պետք է լինեն մեր նոր գրողները, որ կարողանան իրենց դրով գրի կոչման բարձրության վրա մնալ և կյանքի առօրյալի տաղտուկներից, դժգոհություններից իրենց հոգեկան թռիչքը, տաղանդը, ստեղծագործականությունը ստվերի տակ չթողնեն: Այո՛, մենք պետքն ունենք մեր ժողովրդի նոր օրերի հոգեբանությունը մեր ժողովրդի մեջ ամրացնելու, ազատությունն ու անկախությունը մեր ժողովրդի արժանապատվության հետ բարձր պահելու համար: Ասեմ, չի բավեր միայն ինքնություն ունենալ, ինքնություն առանց արժանապատվության, քո արժեքի ճանաչման՝ ձեռնարկ է, անցյալի ժառանգության գիտակցություն է, բայց երբ ունենաս այդ ինքնության արժեքի ըմբռնումը, այդ արժեքին շրտուք կդառնան հոգևորականները, արվեստագետները, մտավորականները, որպեսզի հոգիին շուրջ, կենդանի շուրջ չպակասի մեր ժողովրդին և այս է Չարենցի պատգամը: Եթե կարողանամ ես դա ամփոփված ձևով ասել, պետք է միայն երկու բառով փակեմ իմ այս հարգանքի տուրքը և կոչը մեր ժողովրդին. մահացողները նրանք են, որոնց մեջ հույսը կմարի, ապրողներ նրանք են, որոնք իրենց մահվան մեջ նույնիսկ իրենց հույսը չեն կորցնի, և այդ հույսի, այդ ձգտումի դեպի կյանք, դեպի Հաղթանակ մեծ նվազածուներից մեկը՝ Եղիշե Չարենցը, այսօր ասում է. «Իմ դրին մի կապվեք, գիրից անգին տեսեք հոգին», քանզի գիրն սպանանի, գրի ձեռի դրված հարգանքը արժեք չունի, Աստծու համար արժեք չունի, բայց հոգուն ընկալուղ դառնալը և այդ հոգիին նոր արտահայտություն տալն է, որ Աստծուն փառք տալու հետ կնույնանա իմ ըմբռնումով և Եղիշե Չարենցի Հիշատակը կանմահացնի մեր մեջ և իր հոգին նոր նվազումով կճառագայթի մեր ժողովրդի կյանքի մեջ, մեր Հայրենիքի ամրացման, մեր մշակույթի հառաջացման, աղքատության դեմ, ոգու սովի դեմ մեր պայքարի ճանապարհին: Ինքը գրեց «Գիրք ճանապարհի»-ն: Եկեք մենք մեր կյանքովը ապրենք, քայլենք ճանապարհը դրքի, որ ճանապարհն է հոգու դեպի Հավերժություն Հավիտյանս Հավիտենից. ամեն: